ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/158

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Սաբրի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Մասնակցի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցում, շենք-շինությունների և կաթսայատների վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ. թիվ 26/26-1/15517-2019 գրությամբ «Սաբրի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 09.09.2019թ.-ի թիվ 21/1-1278 գրության հիման վրա, 19.09.2019թ.-ին «Սաբրի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 19.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.09.2019թ.-ին ու 03.10.2019թ.-ին նշանակվել են նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 03.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.10.2019թ.-ին:

2. «<u>ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 09.09.2019թ.-ի թիվ 21/1-1278 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1 պայմանագիրը, համաձայն որի «Սաբրի» ՍՊԸ-ը պետք է իրականացներ Պայմանագրի Հավելված 1 ով նախատեսված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների և թիվ 1 կաթսայատան սարքերի տեղադրման և նորոգման աշխատանքները:

Պայմանագրի 1.3 կետով և Հավելված-2 ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր 60 օրացուցային օր, որն ավարտվել է 13.07.2019թ.:

26.07.2019թ. «Սաբրի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է կատարողական ակտեր, ընդունման-հանձնման արձանագրություններ պայմանագրով նախատեսված աշխատանքների մասնակի կատարման վերաբերյալ և հարկային հաշիվներ 1.219.411 և 941.124 դրամ գումարի չափով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սաբրի» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունների՝ պայմանագրային արժեքի 15.560.000 ՀՀ դրամից պակաս աշխատանք է կատարել 17.399.465 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև 13 օրացուցային օրով խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը, «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները՝ միակողմանի լուծել է պայմանագիրը:

Ի պատասխան «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետին ուղղված ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի 29.08.2019թ. թիվ 01.1/26-1/14464-12019 գրությանը՝ ուղարկվում է «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ. կնքված կապալային աշխատանքների կատարման ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1 պայմանագրով նախատեսված կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները, կատարողական ակտերը, ծավալաթերթ-նախահաշիվները, համադրման ակտերը և հարկային հաշիվները:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են «Սաբրի» ՍՊԸ-ի վերաբերյալ մնացած անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Սաբրի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Սաբրի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ. թիվ 26/26-1/15517-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 03.10.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«2019թ. մայիսի 15-ին «Սաբրի» ՍՊԸ-ի և «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օր:

Պայմանագրի 3.2.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

Պայմանագրի 3.1.4. կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3. կետում նախատեսված ժամկետը:

Արձանագրելով աշխատանքների, դրանց ծավալների արդյունքների անհամապատաս-խանություն նախագծանախահաշվային փաստաթղթերին, մասնավորապես նախագծային թերություններ՝ «Սաբրի» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 01.06.2019թ., 07.06.2019., 03.07.2019., 12.07.2019թ. գրություն¬ներով /կցվում են/ ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունները նախագծանախահաշ-վային փաստաթղթերում:

«Սաբրի» ՍՊԸ-ի Պատվիրատուին ուղղված գրություններին «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը ներկայացրել է պատասխան 06.06.2019թ. և 12.07.2019թ. գրություններով /կցվում են/՝ մերժելով Ընկերության ներկայացրած առարկությունները և առաջարկությունները:

«Սաբրի» ՍՊԸ-ն 25.07.2019թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի թերությունների և բացթողումների վերաբերյալ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հարցի վերաբերյալ նախարարության միջամտությունը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սաբրի» ՍՊԸ-ի 25.07.2019թ. գրությանն ի պատասխան, հայտնել է /կցվում է/, որ ՍՊԸ-ի կողմից բարցրացված հարցը վերաբերում է պայմանագրի կառավարմանը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն վերապահված է պատվիրատուին, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը այս հարցում միջամտելու լիազորություն չունի:

«Սաբրի» ՍՊԸ-ի և «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի հիման վրա ստորագրվել է համադրման ակտ /կցվում է/՝ նախատեսված աշխատանքների ծավալների համապատասխան ավելացումներով և պակասեցումներով:

«Սաբրի» ՍՊԸ-ին ուղղված 30.07.2019թ. թիվ 21/14-1037 գրությամբ «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «բ» ենթակետի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Սաբրի» ՍՊԸ-ի և «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագիրը «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4.-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3. կետում նախատեսված ժամկետը՝ աշխատանքների կատարման համար նախատեսված 60 օրացուցային օրը:

Հայտնում ենք, որ մինչև 30.07.2019թ. «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման որոշման կայացմանը՝ «Սաբրի» ՍՊԸ-ն բազմիցս գրություններով /01.06.2019թ., 03.07.2019., 07.06.2019., 12.07.2019թ. գրություններով/ դիմել է «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա թերությունների մասին, սակայն Պատվիրատուի կողմից այս հարցում որևէ աջակցություն կամ օժանդակություն չի ստացվել:

Ավելին, Պատվիրատուն պատասխանել է Ընկերության միայն 01.06.2019թ., 03.07.2019. գրություններին, իսկ հետագա գրությունները ընդհանրապես թողել անպատասխան: Տեսնելով, որ Ընկերության դիմումները՝ ուղղված Պատվիրատուին, մնում են անպատասխան, «Սաբրի» ՍՊԸ-ն 25.07.2019թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի թերությունների և բացթողումների վերաբերյալ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հարցի վերաբերյալ նախարարության միջամտությունը: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սաբրի» ՍՊԸ-ի 25.07.2019թ. գրությանը ի պատասխան /կցվում է/, հայտնել է, որ ՍՊԸ-ի կողմից բարցրացված հարցը վերաբերում է պայմանագրի կառավարմանը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն

վերապահված է պատվիրատուին, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը այս հարցում միջամտելու լիազորություն չունի:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Լ.Օհանյանին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սաբրի» ՍՊԸ-ի և «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի «Սաբրի» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված ժամկետում չկատարելու մեջ բացակայում է Ընկերության մեղավորությունը, պայմանագրային պարտավորությունների, իբրև թե, ոչ պատշաճ, որ ժամանակին և ոչ ամբողջ ծավալով կատարման պատճառը նախագծող ընկերության նախագծանախահաշվային փաստաթղթերում թույլ տված բազմաթիվ թերություններն ու բացթողումներն են, ինչի վերաբերյալ Ընկերությունը բազմաթիվ անգամ գրավոր հայտնել է Պատվիրատուին, ինչպես նաև Պատվիրատուի կողմից այս հարցում ցուցաբերած անգործությունն է: Մասնավորապես.

1. Նախագծանախահաշվային փաստաթղերում ընտրվել են որոշակի գնով սարքավորումներ, սակայն շուկայի ուսումնասիրության պատճառով պարզվել է, որ նշված ապրանքատեսակները մոտ 8-9 անգամ ավելի թանկ են: «Սաբրի» ՍՊԸ-ն դիմելով Պատվիրատուին՝ խնդրել է պարզաբանում ներկայացնել ընտրած գների հիմնավորվածության վերաբերյալ: Սակայն Պատվիրատուն առաջարկել է այս հարցի հետ կապված դիմել նախագծող ընկերությանը:

*2. Նախագծանախահաշվային փաստաթղերում ընտրվել են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք տարիներ առաջ դուրս են եկել արտադրությունից /օրինակ կոնկրետ տեսակի մալուխագիծ/: Ընկերությունը այս խնդրի հետ կապված դինել է Պատվիրատուին և խնդրել թույլ տալ մալուխը փոխարինել շուկայում գոյություն ունեցող համարժեք մալուխով: Մասնավորապես, «Սաբրի» ՍՊԸ-ն հայտնել է, որ նախագծով նախատեսվել է ՏԵ 389-ից ՏԵ 406 ենթակայանների միջև խրամուղով անցկացնել մալուխագիծ ԱՊՎՊ-10-30*70մմ2 մակնիշի 210 գծամետր ընդհանուր երկարությամբ: Սակայն հանարապետության տարածքում առկա էլ. սարքավորումներ ներկրող ընկերություններում նման պարամետրերով մալուխ գոյություն չունի: Ընկերության կողմից ռաջարկվել է նախատեսված ԱՊՎՊ -10-30*70մմ2 մալուխի փոխարեն տեղադրել համարժեք 3*70 յուղային մալուխ: Նշված խնդրանքը Պատվիրատուի կողմից մերժվել է: 12.07.20198թ. Ընկերությունը Պատվիրատուին ուղղված գրությամբ նորից բարցրացրել է նմանատիպ խնդիր, հայտնելով, որ նախագծով նախատեսվել է կաթսայատանը տեղադրել թվով 2 հատ*

շրջանառու պոմպեր (h=20 մ G=43Մ3/ժամ, N=11 կվտ) պարամետրերով, նման պարամետրերը վերցված են ՍՍՀՄ պրեստորանտներից, որոնք այժմ չեն արտադրվում իրենց բավականին մեծ էներգեասպառման հանգամանքներով պայմանավորված, դրանց փոխարեն արտադրվում են ժամանակակից շրջանառու պոմպեր, որոնք ավելի քիչ ծախսատար են, բայց ավելի մեծ արտադրական ցուցանիշներ են ապահովում: Ընկերության կողմից առաջարկվել է դրանց փոխարեն տեղադրել 7,5 կվտ հզորությամբ G=45մ3/ժամ h=36մետր պարամետրերով իտալական արտադրության PEDROLLO ֆիրմայի 2 հատ շրջանառու պոմպեր: Դրանք իրենց տեխնիկական պարամետրերով ամբողջությամբ ապահովում են կաթսայատան անխափան աշխատանքները ամբողջ ժամակահատվածում: Այս խնդրանքը մնացել է անպատասխան:

3. Ընկերությունը համապատասխան գրություններով մանրամասն ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա բացթողումները և թերությունները, մասնավորապես, նշվել է, որ ծավալաթերթ-նախահաշվում ներառված աշխատանքները իրենց քանակներով չեն համապատասխանում իրական ծավալներին, մի շարք աշխատանքներ ընդհանրապես չեն ներառվել ծավալաթերում, առանց որոնց կատարման անհնար է դառնում օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտը և այլն: Օրինակ, Ընկերության կողմից հայտնվել է.

Նախագծով նախատեսվել է կաթսայատանը տեղադրել 2 հատ 1000 լիտր տարողությամբ մեմբրանային ընդարձակիչ բաքեր: Սակայն հաշվի չեն առնվել, որ դրանք իրենց գաբարիտային չափերը գերազանցում են, կաթսայատան մուտքային մասերի դռների չափերին և դրանց տեղադրումը կաթսայատանը դարձել է անհնար: Ուստի խորհրդակցելով մասնագետների հետ Ընկերությունը եկել է այն եզրակացության, որ դրանք կարող են փոխարինվել 3 հատ 500 լիտրանոց մեմբարանային ընդարձակիչ բաքերով:

*Նախատեսվել է մոնտաժել DN=159*4,5մմ պողպատյա ջրատար խողովակաշար, այն ինչ կաթսայատան ջրատար խողովակաշարը, որը ենթակա է փոխարինման, ունի DN=89*3,5մմ տրմաչափ:*

Φ 150մմ, Φ100մմ, Φ80 մմ տրամաչափի սողնակների տեղադրման համար պարտադիր պահանջվում է միացման հանգույցներում տեղադրել պոլիէթիլենե միջադիրներ, սակայն դրանք չեն հաշվառվել նախագծում:

Քանի որ նախկին շրջանառու պոմպերը իրենց մոնտաժման ժամանակահատվածում բերվել են միևնույն առանցքի ջրահոսքի հետ, այսինքն պոմպերը մատակարարվող

խողովակաշարի հետ միացրել են անհատապես մշակված ձևավոր մասերով, ապա դրանց փոխարինման և նոր շրջանառու պոմպեր տեղադրելու դեպքում անհարժեշտություն է առաջանում, փոփոխել դրանց տեղադրման դիրքը, ձևը և յուրաքանչյուրի համար կախված միացման տեղից մշակել և միացումը իրականացնել անհատական եղանակով:

Նախագծով նախատեսվել է 2 հատ էլեկտրական ՊԱՄ (ABP) վահանակի 2 մուտքի համար տեղադրել 3 հատ BA-57 1000Ա ավտոմատ անջատիչներ, այնինչ յուրաքանչյուր էլեկտրական ՊԱՄ (ABP) 2 մուտքանի վահանակի համարպահանջվում է 2-ական ավտոմատ անջատիչ (մեկ հատ պակաս է նախատեսվել): Նախագծով նախատեսված 3 հատ 1000Ա ավտոմատ անջատիչների տեղադրման դեպքում հնարավոր չի լինի ցանցը դնել լարման տակ և փորձարկել:

Բացահայտելով նմանատիպ բազմաթիվ թերություններ՝ «Սաբրի» ՍՊԸ-ն խնդրել է Պատվիրատուին հաշվի առնելով նշված դիտողությունները՝ երկարացնել պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը, այդ ընթացքում նախագծային կազմակերպության հետ համատեղ, փորձել ողջամիտ լուծումներ տալ, Ընկերության կողմից բարձրացված հարցերին:

Փաստացիորեն Ընկերության կողմից բարցրացված բոլոր խնդիրները մնացել են անպատասխան և չլուծված Պատվիրատուի կողմից: Մինչդեռ Պայմանագրի 3.2.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Վերոհիշյալի հետևանքով «Սաբրի» ՍՊԸ-ն կարողացել է կատարել պայմանագրով նախատեսված այն ծավալի աշխատանքները, որոնց մասով նախածանախահաշվային փաստաթղթերում թերություններ չեն եղել:

Վերոշարադրված փաստերը, Ընկերության կարծիքով, վկայում են, որ «Սաբրի» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր միջոցները՝ կնքված պայմանգրով ստանձնած պարտավո¬րությունները պատշաճ կատարելու ուղղությամբ, սակայն նախագծող ընկերության նախագծում թույլ տված բացթողումների և թերությունների, ինչպես նաև այս հարցում Պատվիրատուի դրսևորած անգործության պատճառով զրկվել է նշված պարտավորությունները ժամանակին կատարելու հնարավորությունից:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Սաբրի» ՍՊԸ-ին չվերագրել

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորությունների խախտում և Մասնակցին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«ՀՀ ոստիկանության կրթահամալիթ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 2019թ. մայիսի 15-ին կնքվել է «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրերով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Մասնակիցը պետք է իրականացներ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների սարքերի տեղադրման և նորոգման ու ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թիվ 1 կաթսայատան տեղադրման և նորոգման աշխատանքները:

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների սարքերի տեղադրման և նորոգման ու ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թիվ 1 կաթսայատան տեղադրման և նորոգման աշխատանքների կատարման ժամկետը սկիզբ է համարվել 15.08.2019թ.-ին, իսկ ավարտը՝ 10.07.2019թ.-ը:

«ՀՀ ոստիկանության կրթահամալիթ» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրերով պայմանագրի շրջանակներում կնքվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կենտրոնական ջեռուցման համակարգի /թիվ 1 կաթսայատուն/ տեղադրման աշխատանքների N 1 համադրման ակտ:

www.gnumner.am համացանցային կայքում 31.07.2019թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 15.05.2019թ.-ին կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱ.ՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի համաձայն Մասնակցի կողմից պետք է իրականացվեր Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների և թիվ 1 կաթսայատան սարքերի տեղադրման և նորոգման աշխատանքները:

Պայմանագրի 1.3 կետի և Հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր 60 օրացուցային օր, որն ավարտվել է 13.07.2019թ.-ին:

Մասնակցի կողմից 26.07.2019թ.-ին ներկայացվել է կատարողական ակտեր, ընդունման-հանձնման արձանագրություններ պայմանագրով նախատեսված աշխատանքների մասնակի կատարման վերաբերյալ և հարկային հաշիվներ 1 219 411 ՀՀ դրամ և 941 124 ՀՀ դրամ գումարի չափով (ստանձնած պարտավորությունների պայմանագրային արժեքի 19 560 000 ՀՀ դրամից կատարվել է 2 160 535 ՀՀ դրամ գումարի չափով, չի կատարվել 17 399 465 ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև 13 օրացուցային օրով խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ. թիվ 26/26-1/15517-2019 գրությամբ «Սաբրի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների և թիվ 1 կաթսայատան սարքերի տեղադրման և նորոգման աշխատանքները, իսկ Պատկերատուն պարտավոր է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդնարտներին, շինարարական նորմերով և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես Պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց, կատարման ժամկետը սահմանվում է 1-ին և 2-րդ չափաբաժնի համար՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հաշված, յուրաքանչյուր չափաբաժնի համար՝ 60 օրացուցային օր:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիր և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կրթահամալիթ» ՊՈԱԿ-ի և «Սաբրի» ՍՊԸ-ի միջև 2019թ. մայիսի 15-ին կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրերով պետական գնման պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ Մասնակիցը պետք է իրականացներ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի էլեկտրական ենթակայանների սարքերի տեղադրման և նորոգման ու ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թիվ 1 կաթսայատան տեղադրման և նորոգման աշխատանքները՝ սկիզբը համարելով 15.08.2019թ.-ը, իսկ ավարտը՝ 10.07.2019թ.-ը: Աշխատանքները պետք է կատարվեին ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան՝ 1-ին և 2-րդ չափաբաժնի համար պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում:

Մասնակցի կողմից Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման պարագայում, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիր և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին հայտնել է, որ Պատվիրատուին ուղղված 01.06.2019թ., 07.06.2019., 03.07.2019., 12.07.2019թ. գրություններով ներկայացրել է նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների մասին, սակայն վերջինս 06.06.2019թ. և 12.07.2019թ. ներկայացրել է պատասխան գրություններ՝ մերժելով Ընկերության ներկայացրած առարկությունները և առաջարկությունները:

«Սաբրի» ՍՊԸ-ն 25.07.2019թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի թերությունների և բացթողումների վերաբերյալ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան Մասնակցին հայտնվել է, որ պայմանագրի կառավարումը վերապահված է պատվիրատուին:

«Սաբրի» ՍՊԸ-ի և «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջև կնքված «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի հիման վրա ստորագրվել է համադրման ակտ նախատեսված աշխատանքների ծավալների համապատասխան ավելացումներով և պակասեցումներով, սակայն համադրման ակտը վերաբերել է միայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի թիվ 1 կաթսայատանը կատարվելիք աշխատանքների մասով, իսկ մյուս չափաբաժնի մասով որևէ համադրում չի կատարվել:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո նույն պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներում և ծավալնելում չի կատարել պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները, դրանով իսկ խախտելով պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը:

Նշվածը ապացուցվում է նաև այն փաստով, որ Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացրել ամբողջ պայմանագրի ընդհանուր գումարի ընդամենը 1 291 411 ՀՀ դրամ և 941 124 ՀՀ դրամ գումարի չափով հանձման-ընդունման արձանագրություններ:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից Պատվիրատուին ուղղված մի քանի գրություններով ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա անհամապատասխանություններին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Սաբրի» ՍՊԸ-ն մասնակցելով «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգին և ուսումնասիրել է վերոնշյալ ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ինչով պայմանավորված ներկայացրել է գնային առաջարկը, մասնակցել և ճանաչվել է ընտրված մասնակից՝ չարձանագրելով նախագծանախահաշվային փաստաթղթերում որևէ անհամապատասխանություններ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սաբրի» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում

31.07.2019թ.-ին հրապարակելով պայմանագրերի միակողմանի լուծման մասին ծանուցումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն' պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում' նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված' ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սաբրի» ՍՊԸ-ն, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ. թիվ 26/26-1/15517-2019գրությամբ «Սաբրի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/158 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սաբրի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**